

մի շտապիր, ոյժդ խնայութեամբ բանեցուք որ թէ առողջութիւնդ դիմանայ եւ թէ կարենաս քիչ ատենի մէջ շատ գործ տեսնել :

Կուզես որ ձանձրայի մէկ աշխատանք մը շուտով ու օւռև կւրաով լմբնցընես . նայէ որ կրցածիդ չափ լաւ աշխատիս, այնպէս որ գործդ ոչ ամօր թէրէ քեզի եւ ոչ մեղադրութիւն, եւ հարկ ալ ըլլայ որ նորէն սկսիս :

Աշխատանքը ինչպէս որ պէտք է օգտակար ընելու համար, մարդս պիտի նայի որ իր վիճակին ընտրութիւնը լաւ կերպով ընէ . այս ընտրութիւնն ալ լաւ կրցայ ընդհանրապէս՝ երբոր մէկուն ախորժակին ու կարողութեանը յարմար է : Մակայն ինչ վիճակ ալ ընտրես, առանց խնայութիւն ընելու հարատանայր կարելի բան չէ : ԱՌ

եւ իցէ ընջաւէտ մարդու հարստութեան աղբիւրն որ փնտուս, կրտսենես որ աւելի իրարու վրայ դնելով պահուած ստակն ու խնայութիւնն եղեր է այն աղբիւրը՝ քան թէ ստակը պտըտցընելու հարտարութիւնը :

Խնայութիւնը այս մեծ աղեկութիւնն ալ ունի որ ի գործ դրուելով՝ համար ոչ շատ խելքի կարօտ է, ոչ խորունկ մտածութեանց եւ ոչ կարգէ դուրս բարերազդութեան . ուսախ թէ աղքատը կրնայ խնայոդ ըլլալ, թէ միջակը եւ թէ հարուստը, բաւական է որ կամքունենան, ու աղքատը՝ խնայոդ աղքըտն բարի օրինակ առնէ, միջակը միջակին, հարուստն ալ հարըստէն : — Աւրիշ անգամ խնայութեան կանոններուն վրայ կըխօսինք :

Բ. ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵԿՐԱԳԱՅՑ

ԱՐՈՒԵՍՏԱՀԱՆԴԻՒՄ.

ՀԱՐԵՒԱՎԵՅԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԱՆԳԱՄՈՅ ՅՈՒՂԱՐԿԱՅ ԲԵՐՔԵՐՈՒՆ Վ.Բ.Յ.:

Տիեզերական արուեստահանդիւմին մէջ Գաղղոյ թերքերէն ետև ամենէն հարուստները Անգդիոյ հանդիսարաններն են :

Հանքի ու մետաղներու կողմանէ առջի թերան Գաղղիայէն վար կերեւնայ, բայց լաւ դիտելու ըլլաս նէ՛ Անգդիոյ անբաւ հարստութիւնը այս բանիս մէջ ալ մէկն կրնասկըցուի : Մասյն գետնածուխի կամ ածխաքարի տեսակները 264 հատ են . բող զանազան քոքերն ու ածխաքարի նման ուրիշ վառելիքները : Երկարեղենի և ուրիշ տեսակ տեսակ մետաղներուն մէջ՝ նշանաւոր է արծարաբեր կապարը :

Երկրագործական կործիքները թէ շատուր են եւ թէ լաւ շինուած . ասոնց մէջ ամենէն աւելի աչքի զարնողներն են շոգեշարժ արօրը, շոգեշարժ արտհունձը եւ ուրիշ զանազան մանր շոգեշարժիներ :

Այլ և այլ արուեստից մէջ գործածուած իրարմէ գեղեցիկ ու վարպետ գործիքները շատ կատարելագործուեր են . օրինակի համար, Սմիր անունով անգիացոյն կոտու գործելու մեքենան

մէկ վայրկենի մէջ երկու հարիւր լիսուն անգամ մազոդ կընետէ :

Ասոր նման ուրիշ մեքենայ մը կայ որ 250,000 ֆրանքի ծախուեր է : Պործիք մը կայ որ բգի վրայ նկարուած ձեւելը կոտու տպելու երկրքէ զաններուն վրայ կըփորագրէ . ուրիշ փոքրիկ գործիք մըն ալ երկարուղիներու տոմսակներուն վրայ բռահամար կըտպէ :

Կառք շինելու արհեստը շատ բարակցեր ու լացեր է : Տեսաբանական գործիքները վերչի աստիճանի կատարելութեան հասած կըսեպուին, մանաւանդ մեծամեծ ու գեղեցիկ դիտակները : Նոյնպէս նշանաւոր են եկեփորական գործիքները, ծովուն տակէն անցնող նեռագրական թելերը, շարժարանական գործիքներու զաղափարները, եւ այլն :

Շատ գեղեցիկ կաշիներ ու թղթեր կան, որոնց նմանը ուրիշ տեղ չգտնուիր : Կերակրելինաց կողմանէ ամենէն աւելի աչքի զարնողներն են Անգդիոյ պանիքներն ու եզան մսին աղածը :

Նաևու և նաւակի օրինակները թէպէտ քիչ՝

բայց շատ սիրուն են, մանաւանդ մեկ մեծ շոգենաւի մը օրինակը որ դեպ ի երկայնքին կորուածի պէս ըլլարով՝ բոլոր ներսի բաժանմունքներն ու կազմուածքը աչքի առջևուը դրած է :

Բանած մետաղներու կողմանէ այս բանս դիտուեր է որ Անգղիան պրդաստի եւ ամեն տեսով մեծամեծ գործիքներու շատ մը օրինակներ խրկեր է ալ նէ, մանր զարդերու գործիքներ գրեթէ ամեննեին չէ խրկած : Այն գործիքներուն շատին կատարելուրիւնը մերմը շինուածքին մաքրուրիւնը, մէյմայ զնոյն ամենուրիւնն է :

Ուկերզուրեան թերքերուն մէջ աղուոր բաներ շատ կան, մանաւանդ մեծամեծ արձրեղէն բանուածքներ որ այլ եւ այլ պատմական կամ վիպասանական տեսարաններ ձևացուցեր են. ասոնցմէ ոմանք Գաղղիոյ բանուածքներուն չնասնին ալ նէ, ոմանք կրնաւասարին անոնց : Ակնազործուրեանը մէջ աւելի բարակուրիւն ու աւելի կիրք ափորմակ կերեւնայ. որով զարդերը այնպէս շինուած են որ մետաղը գոհարներուն բազմուրեանը մէջ չտեսնուելու պէս եղած է :

Քրտի խեցեղէն անօրներու կողմանէ շատ յառաջադէմ են Անգղիացիք. անոնց կարգն են երկու ահազին աշտանակներն որ Վիլսոնիա բագունին Գաղղիոյ կայսեր ընծայեր է, և շատ մը ընալուծական մեծամեծ բորանոցներ եւ ուրիշ գործիքներ : Բայց թիւրեղի և ապակիներու կողմանէ որչափ ալ վարպետ ըլլան՝ դեռ Գաղղիացոց չեն հասած :

Բամպաւկեղէն ու բրդեղէն թերքերու կողմանէ խիստ շատ բան թերեր են Անգղիացիք : Շատ մը գեղեցիկ կերպասներ, չոխաններ և ուրիշ ազնիւ լորեր ալ կան որ Գաղղիոյ մաքսատունները չեն բողուր որ Անգղիայն թերուին ու ծախուին :

Անգղիացոց մետարսեղիններն ընդհանրապէս Գաղղիոյ մետարսեղիններուն չեն հասնիր. սա-

կայն բաւիշներ, կազեր ու շղարշներ կան որ զերազանց են :

Կտաւեղէնի մէջ Խոյանտան հարուստ է, և այն երկրին շատ քաղաքները կանեփը կըրանին ու կտաւէ լարեր կըշինեն՝ իրարմէ ազնիւ ու ամուր. բայց համդիսի թերուած չեն. աւելի աչքի երեցածներն են առազաստի լարեր ու պամիսաթար ըստուած կտաւները :

Անգղիոյ զանազան հիւսուածքները, այսինքն զուրպաններ, բաճկոններ, և այն, նմանապէս բրդէ ձեռնոցներ որ աշխարհիս ամեն կողմը կըփրկուին, իրենց կատարելուրիւնները հոս այ կերեւցընն, որ են դիմացկունուրիւն և ամնուրիւն :

Տեսնողները կըզարմանան Անգղիոյ բանուածքներուն զեղեցկուրեանն ու ամնուրեանը վրայ . նոյնպէս այ զորգերուն ու կապերուններուն, որ թէպէտ Գաղղիոյ մէջ բանուած Պոլէի, Կոպլէնի, Օպիւսոնի զորգերուն չեն հասնիր աղուորութան կողմանէ, բայց անոնցմէ շատ աւելի աժան են :

Խիժակէ կամ բառուու ըստուած առաձգական նիսրէն շինուած գործիքներուն ու հազուստներուն խիստ շատ տեսակները կան : Խիժակէ հազուստներ կան որ թերեւուրեան կողմանէ յիրավի կարգէ դուրս կերպով զարմանալի են :

Տան կարասիններուն պակասուրիւնն է հին ձև ու հաստ երեւոյք. բայց Աւելիս անունով անգղիացոյն փայտի վրայ փորած ծաղկըններուն ու բռչուններուն զեղեցկուրեանը չստի չկայ : Գաղնակները (Փիանօնները) մահոնի փայտէ ըլլալու տեղ ընկուգենի են :

Անգղիոյ փորազբուրեան, տպազրուրեան, վիմագրուրեան, կազմաքարուրեան ալ խիստ շատ փորձերն ու օրինակները թերուած են որ ամեն զովեստի արժանի են :

Գ. Հ Օ. Ն Գ Ի Ս Ս Ո. Ր Ո. Ն Ա Շ Խ Ո. Ր Հ Ա Շ է Ն Մ Ո. Ր Գ Կ Ո. Ն

ՅՐԱՆՔՆԵՐ

(Նարայարուրիւն).

Ամերիկացիք այնջափ մեծ վատահուրիւն ունեն Ֆրանքլինի խելքին ու արդարասիրուրեանը

վրայ որ ամեն տեսակ քաղաքական պաշտօններ առաջարկեցին իրեն : Ֆրանքլին ինքն իրեն հա-